ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

Քաղ. Երևան 31 օգոստոսի 2022 թ.

Սահմանադրական դատարանի դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Վաղարշյանի

Անդամակցությամբ՝ Ե. Խունդկարյանի

Վ. Գրիգորյանի

«ԱՐՏՅՈՄ ԵՎ ՎԱՀԱԳՆ» ՍՊԸ-Ի, «ՍՊԻՏԱԿԻ ՀԱՑԱՄԹԵՐՔՆԵՐԻ ԿՈՄԲԻՆԱՏ» ԲԲԸ-Ի, «ՏԻԳՐԱՆ Վ» ՍՊԸ-Ի, ԱՐՏՅՈՄ ՄԱԿԱՐՅԱՆԻ, ԼՈՒՍԻՆԵ ՄԵԼՈՅԱՆԻ, ՍՅՈՒԶԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԴԵՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. 2022 թվականի օգոստոսի 9-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել «ԱՐՏՅՈՄ ԵՎ ՎԱՀԱԳՆ» ՍՊԸ-ի, «ՍՊԻՏԱԿԻ ՀԱՑԱՄԹԵՐՔՆԵՐԻ ԿՈՄԲԻՆԱՏ» ԲԲԸ-ի, «ՏԻԳՐԱՆ Վ» ՍՊԸ-ի, Արտյոմ Մակարյանի, Լուսինե Մելոյանի, Սյուզաննա Գրիգորյանի անհատական դիմումը, որով դիմողները վիճարկում են «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թ. դեկտեմբերի 25-ի օրենքի, ներառյալ՝ դրա 3-րդ հոդվածի 2-րդ մասի բ) կետի, 17.1-ին հոդվածի 1-ին մասի և 20-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածին,

60-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասերին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխանությունը:

2. 2022 թվականի օգոստոսի 15-ին Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարի գրությամբ դիմողը տեղեկացվել է, որ դիմումում չի պահպանվել «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի պահանջը, մասնավորապես՝ առկա չէ «ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի այն վերջնական դատական ակտը, որով դիմողի նկատմամբ կիրառվել է նրա կողմից վիճարկվող օրենքի դրույթը»:

3. Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարը 2022 թվականի օգոստոսի 23-ի գրությամբ դիմողին տեղեկացրել է, որ 2022 թվականի օգոստոսի 19-ին վերստին ներկայացված դիմումում կրկին չի պահպանվել «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի պահանջը, և հղում կատարելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասին՝ հայտնել է, որ վերադարձվում են 2022 թվականի օգոստոսի 9-ի և 2022 թվականի օգոստոսի 19-ի դիմումները:

Դիմումատուն միաժամանակ տեղեկացվել է, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ դիմումը վերադարձնելը կարող է եռօրյա ժամկետում բողոքարկվել Սահմանադրական դատարան:

4. 2022 թվականի օգոստոսի 30-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել դիմողներ «ԱՐՏՅՈՄ ԵՎ ՎԱՀԱԳՆ» ՍՊԸ-ի, «ՍՊԻՏԱԿԻ ՀԱՑԱՄԹԵՐՔՆԵՐԻ ԿՈՄԲԻՆԱՏ» ԲԲԸ-ի, «ՏԻԳՐԱՆ Վ» ՍՊԸ-ի, Արտյոմ Մակարյանի, Լուսինե Մելոյանի, Սյուզաննա Գրիգորյանի ներկայացուցիչ Արթուր Գրիգորյանի անհատական դիմումները վերադարձնելու դեմ բողոքը:

5. Ուսումնասիրելով Սահմանադրական դատարան ներկայացված դիմումները, վերջիններիս կից փաստաթղթերը, Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարի գրությունները՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը եզրահանգում է, որ ներկայացված սույն դիմումին կից՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի իմաստով «դատարանի վերջնական դատական ակտի» առկայության հարցն ուղղակիորեն փոխկապակցված է Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի իմաստով «դատական պաշտպանության բոլոր միջոցների» սպառման՝ անհատական դիմումի ընդունելիության պահանջի բավարարման հարցին, որի վերաբերյալ որոշման կայացման իրավասությունը վերապահված է Սահմանադրական դատարանին:

Հետևաբար՝ ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասը՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

«ԱՐՏՅՈՄ ԵՎ ՎԱՀԱԳՆ» ՍՊԸ-ի, «ՍՊԻՏԱԿԻ ՀԱՑԱՄԹԵՐՔՆԵՐԻ ԿՈՄԲԻՆԱՏ» ԲԲԸ-ի, «ՏԻԳՐԱՆ Վ» ՍՊԸ-ի, Արտյոմ Մակարյանի, Լուսինե Մելոյանի, Սյուզաննա Գրիգորյանի բողոքը բավարարել և դիմումը մուտքագրել Սահմանադրական դատարան՝ նախնական ուսումնասիրության համար:

Նախագահող՝ Ա. Վաղարշյան

Անդամներ՝ Ե. Խունդկարյան

Վ. Գրիգորյան

31 օգոստոսի 2022 թվականի
ՍԴԴԿՈ-45